ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական
ծառայության աշխատակազմի ղեկավար
պրն. Մ.Մինասյանին

Զեկուցագիր

Տեղեկացնում եմ Ձեզ այն մասին, որ Եղեգնաձոր քաղաքի Շահումյան 5 հասցեում գտնվող շենքի վարձակալության համար ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը անհրաժեշտ է փոխանցել 66600 (վաթսունվեց հազար վեց հարյուր) դրամ ընդհանուր գումարով:

Խնդրում եմ Ձեր կարգադրությունը նշված գումարը փոխանցելու համար:

Կից ներկայացվում է վարչական ակտը, հանձնման-ընդունման արձանագրությունը:

Տնտեսական բաժնի պետ Վ. Հովհաննիսյան

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ

Ք. Երևան ---------- 2017թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, մի կողմից, ով գործում է ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս Վարչության աշխատակազմի ղեկավար Վահագն Հարությունյանի, մյուս կողմից ով գործում է վարչության Կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն վարչական ակտը հետևյալի մասին:

1.Սույն ակտով Կողմ-1-ը պարտավորվում է Կողմ-2-ի հետ 2006 թ. մայիսի 15-ին կնքված <Ոչ բնակելի տարածքի վարձակալության> թիվ 112/05 պայմանագրով նախատեսված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Շահումյան 5 հասցեում գտնվող շենքից Կողմ-1-ին վարձակալությամբ տրամադրված ոչ բնակելի տարածքի 2017թ. առաջին կիսամյակի վարձավճարը ընդամենը՝ 66600 (վաթսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով <Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պահպանման ծախսերի համար հատկացված միջոցներից փոխանցել Կողմ-2-ի հաշվարկային հաշվին:

2. Սույն ակտը գործում է մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը:

3. Սույն ակտով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն ակտի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն ակտով սահմանված պայմանների փոփոխումը, ակտում լրացումը կամ գործողության դադարեցումն իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

6. Սույն ակտը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
Հասցե՝ ք. Երևան 0010, Նալբանդյան 13	Հասցե՝ ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4
Գանձապետական հաշվի համարը՝ 900011556355	Գանձապետական հաշվի համարը՝ 900005220117
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ղեկավար՝	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան Կ.Տ	**Վ. Հարությունյան** Կ.Տ

Կատարող

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն
Հասցե՝ ***Տիգրան Մեծի պող. 4***
հ/հ ***900005220117***
<<Արարատբանկ>> ԲԲԸ
հվհհ ***02528489***

Պատվիրատու

ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության
Հասցե ***Նալբանդյան 13***
հ/հ ***900011556355***
ՀՀ ֆին.նախ.գործառ.վարչ.
հվհհ ***02505511***

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի անվանումը՝ «Ոչ բնակելի տարածքի վարձակալություն»

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «15» «05» 2006թ

Պայմանագրի համարը՝ 112/05

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի

Կատարողը՝ ի դեմս ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար Վ. Հարությունյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում

Կատարողը 01 հունվարի 2017թ.-ից 30 հունիսի 2017թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
շենքի		01.01.2017թ-ից	66.600	
վարձակալություն		30.06.2017թ		
Ընդամենը			66.600	

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար

ստորագրություն
Վ. Հարությունյան
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի ղեկավար

ստորագրություն
Մ.Մինասյան
ազգանուն, անուն

Կ.Տ.